

ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԸ ԼԵՂՎԱԹԱՆԱՍՅԵՂՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(Աստվածաշնչի անգլերեն թարգմանական խմբագրության հիման վրա)

Ս. Ք. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Գ. Ս. ԳՐԻՈՒՆՅԱՆ

Գեղարվեստական գրականությունը մեկ աստիճան բարձր է ճանաչողական՝ ուղղակի տեղեկություններ հաղորդելու մակարդակից: Այն, հյուսվելով հուսկան կյանքից փոխառնված ու երևակայության գեղատիպակում անդրադարձած իրողություններից, լեզվական բոլոր հնարքները ծառայեցնում է մի հիմնական պատկեր՝ հաղափարական բովանդակությանը: Հետևաբար, գեղարվեստական տեքստի համալորմանի քննությունը չի կարող սահմանափակվել վերլուծության լեզվաոճական մակարդակով, որովհետև այն ամենը, ինչ լեզվի առավել վերացարկված ու ընդհանուր մակարդակում ընգտնվում է, այնքան էլ ավելի ուժեղ է ազդում մարդկային կյանքի վրա: Երկուստեք էլ, իրական խոսքում բոլորովին անսպասելի դառնում էն քաղաքական պատկերներ՝ հյուսված ներքին աղերսների շուրջ: Վերլուծության այս մակարդակին է ուղղված լեզվաբանաստեղծական «ոտեցումը», որը հրեմին հենվում է զրական բնագրերի (նաև թարգմանությունների) զուգադրման վրա՝ բառերի, բառակապակցությունների, ուղղակի կառուցվածքների, նաև հնչյունային առանձնահատկությունների համեմատական վերլուծությամբ:

Գրական սրբանուրի ամեն մի ստեղծագործության գեղադրական-գեղարվեստական արժեքի բանաչին երկի պատկերավորության մեջ է՝ տրամաբանականի ու բանաստեղծականի, իրականի ու երևակայականի սահմանափակում: Զգացմունքների ու իմաստային երանգների բաղմուձայնությամբ հարստացած, թաքնված մի աղերսը, թեթևակի ակնարկը ավելին կարող են տալ մարդկային մտքին, քան բացահայտ, ուղղակի շարադրանքը: Հաճախ էլ թերևս «բառ-պատկերներն» ու «ասույթ-պատկերներն» են կրողները մեծ ճշմարտությունների: Իրենք բուժանդակում են ճշմարտությունն ու իրենք էլ բացատրում: Գեղարվեստական խոսք ստեղծելու գլխավոր նախապայմանն այն է, որ հեղինակը քաղատեղյակ լինի բառի թաքնված իմաստային ու ոճական ներքին հնարավորություններին: Այս առումով բանաստեղծական պատկերների անսպառ աղբյուր է Աստվածաշնչի բնագիրը՝ որպես քերթողական արվեստի անգերազանցելի կոթող: Անդրիական գրական ժառանգության հիման վրա Աստվածաշնչի տարբերակների բանասիրական քննությունը յուրահատուկ արժեք է ներկայացնում: Զուգադրական մեթոդն արդեն ինքնին որոշակի արդյունք է հնթադրում, սակայն այսպիսի քննությունը իրականության մեջ կայունացած, հաստատվող կամ բնօրինակի արժեք ունեցող, նաև այլ տարբերակները, ցույց տալ, որ տարբերակից տարբերակ ստեղծվում է նոր որակ: փոփոխությունների են հնթարկվում մասնավորապես պատկերավոր համեմատությունները՝ երբեմն հանգեցնելով ամբողջական պատկերի ձևափոխման:

Նպատակ շունենալով քննել Աստվածաշնչի ողջ համակարգը, նախապատվությունը տվել ենք «Նրգ Նրգոց»-ին՝ որպես բանաստեղծական պատ-

1 Ս. Ք. Գասպարյան, Գեղարվեստական գրականության ուսումնասիրության մի քանի մեթոդաբանական հարցեր (Բանբեր Նրևանի համալսարանի, 1987, № 3, էջ 78):

2 «Լեզվաբանաստեղծական տեքստի գործածության կապակցությամբ տե՛ս В. В. Виноградов, О теории художественной речи, М., 1971.

կերտելով առավելագույնս խտացած հատվածի: «Երգ Երգոցի» արժեքավորումը միանշանակ չէ: Կան ավանդական և ժամանակակից նոր մեկնաբանություններ, որոնք լրացուցիչ իմաստաբեկական դերեր են խաղում: Ավանդական մոտեցմամբ «Երգը» գիտվում է որպես Աստծո և նրա ժողովրդի, Քրիստոսի և եկեղեցու, նաև անհատ հավատացյալի և Տիրոջ միջև միություն ու նվիրվածության աշխարհիկ պատկեր: Ներկայումս միտում կա հրաժարվելու այս փոխաբերական մեկնաբանումից՝ քննելով այն որպես քնարական դրամա³, և չնայած որպես դեռադի Զովունու, որին իր հարեմի համար նվաճելու շուրջ ջանքեր է գործադրում Սողոմոնը, մաքուր, հավատարիմ սիրո պատմություն: Հիշատակման է արժանի Քրիստոսի և հոգու միասնության դրույթից ելնող մեկնաբանությանը հակադրվող որակումը, որ էլիով, մեկ ուր Կտակարանում «Երգի» ոչ մի մեջբերում կամ արձան չկա, բարդացնում է այն տեսակետը, որ «Երգը» իմաստասիրական քննարկության հանգույցված շրջա է: Այն պատկերում է սիրո ամենաբարձր մարդկային, հոգու, բացառիկ և գեղեցիկ որակներումները տառապանքի ու տարերքի, տաղանդի ու ընդունակության ամենատարբեր պահերին և լուսնահորություններ ունի դժգոհական ու բնության պատկերներով հարուստ շատ մշակույթների հետ, մասնավորապես՝ արևելյան⁴, ինչից, ամենապայմանական փոխաբերական իմաստավորումն ընդունելու դեպքում անհամ բնությունը հարկ է սկսել բառիմաստային մակարդակից:

Բնաստիական գույադրման համար հիմք ենք ընդունել Աստվածաշնչի հետևյալ անդրերն տարբերակները. Արտոնյալ Թարգմանություն (ԱԹ) — The King James or Authorised Version, Վերստուգյալ Թարգմանություն (ՎԹ) — St. James Revised Version, Նոր Միջազգային Թարգմանություն (ՆՄԹ) — New International Version, Նոր Անգլիական Աստվածաշունչ (ՆԱԱ) — New English Bible, Բարի Ավիսման Աստվածաշունչ (ԲԱԱ) — Good News Bible:

Ենթելով «Երգի» բնագրից, կարելի է նկատել, որ ընդամենը ավանդական պատկերային համակարգը հիմնականում արտահայտված է համեմատություններով. ինքը՝ «Գիրքն» է հուշում կանգ առնել պատկերավոր համեմատությունների վրա: Առանձնացված համեմատությունների շարքում տարբերակից տարբերակ փոփոխությունները միանման արժեք չունեն: Կան փոփոխություններ, որ կրում են մասնավոր բնույթ, հիմնված են իմաստների մասնակի տարբերությունների վրա: Կան բառիմաստային կամ համապատկերային իմաստի մթաճումներ՝ արտահայտված նաև կառուցվածքային ձևափոխություններով: Ստորև ներկայացնում ենք ամենաբնորոշներն ու փոփոխությունների իմաստով առավել հետաքրքրականները: Այսպես.

The head upon thee is like Carmel, and the hair
of thine head like purple (or crimson); the king
is held (or bound) in the galleries (ԱԹ 7:5)⁵.

Այս հատվածը մեկնաբանությունների շատ հնարավորություններ է տալիս հատկապես այն տարբերակներին, որոնք կողմնորոշվում են ԱԹ-ով: Այստեղ իմաստային որոշ կտրուկ մասամբ մթաճում են, և ՆՄԹ-ի հետ համեմատելով կարելի է վերականգնել գրանքի Մասնավորապես՝ «the king is

³ The Concise Dictionary of English Literature, Revised by D. Eagle, 1979.

⁴ S. S. The Song, translated and interpreted as a dramatic poem by Leroy. Waterman (Univ. of Michigan Press, 1948).

⁵ The New International Study Bible, Hodden and Stoughton, p. 935.

⁶ Է. 5 Քո գլուխը քեզ վերայ Կարմիր ծառի է նման, եւ գլխիդ վերայ ծածանուողը՝ ծիրանիի նման. Թագաւորը բռնուած է քո ուղղոն մազերովդ: (Աստվածաշունչ, Շտուտգարտ, 1990: Այսուհետեւ եւ Աստվածաշունչի հայերէն տարբերակից մեջբերումները կարվեն սույն հրատարակությունից):

held in the galleries) հատվածը հնչում է «the king is held captive by its tresses». Գառապարյանը է հան ՆՄԹ-ի ժանդարմությունը, ըստ որի tresses-ին համապատասխանող նրբային բառի մաստը ենթադրում է նմանություն հոսող ջրին: Համանման պատկեր կա ՎԹ-ի «and your flowing locks are like purple» համեմատության մեջ: Այն, որ այս ասուլիքը հինգ օրինակներում էլ տարբեր հնչողություն ունի. միծապես պայտանավորված է purple-hair բառերի իմաստային դաշտերի ընդգրկումով և դրանց փոխադրությունը: Purple բառի ծաղիլը մեծ է. «royal cloth» իմաստը մասնավորում է համատեքստում, նաև հաջորդ նախադասության king-ով: «Մազերն-«ծծիրունի» իմաստային կամրջի հնարավոր կողմերից յուրաքանչյուր տարբերակ առանձնացնում է մի մասնավոր իմաստային երանգ. առատությունը, շուտքը, գույնը, փայլը և այլն. Your hair is like royal tapestry (ՆՄԹ),... your flowing locks are like purple (ՎԹ),... the flowing hair on your head is lustrous black (ՆԱԱ), Your braided hair shines like the finest satin (ԲԱԱ), Purple-ը Աստվածաշնչի համատեքստում նկատելիորեն հարստանում է. այն նախ գույնի անվանում է, որ ամբողջացնում է purple tabernacle, purple curtain, purple cloth, purple raiment, purple vail, purple garment հասկացությունները, ապա էնքը հարստանալով՝ խտանում այս կերպումն մեջ:

Այս անգամ ևս պատկերը հինգ տարբերակներում համասար արժեք չունի: Մասնավորապես ՆԱԱ-ում նշված համեմատությունը որպես այդպիսին չկա, համեմատության օբյեկտը պարփակվում է ինքն իր մեջ. պատկերը նման է հետևանքի արձանագրման, և հաջորդ տողի հետ (Your tresses are braided with ribbons) ներկայացնում է բոլորովին այլ մեկնաբանություն: Այս տարբերակում «մազերը» բնորոշվում են իրենց իսկ ներուճակ հատկությամբ՝ դույնով՝ lustrous black, ի տարբերություն մյուս օրինակների, որոնց մեջ համեմատությունն ուղղված է գեպի դուրս: Ուշագրավ է, որ ԱԹ-ն ներառնում է հետագա իմաստային այս բոլոր երանգները: Purple-ը «բազմանիստ» բառ է և բազմանիստ ու բանաստեղծական՝ նաև ի հաշիվ իր իսկ՝ ԱԹ-ի համատեքստի: Անշուշտ, ավելի դինամիկ են ՆԱԱ-ի և ԲԱԱ-ի օրինակները՝ ի հաշիվ կրկնակի ստորոգման (flowing hair is lustrous black; your braided hair shines like the finest satin), ընդհանուր կողմից՝ ժամանակակից մտածողությամբ դինամիկ այս պատկերները՝ շեղագիտական-գեղարվեստական նույնպիսի արժեք չունեն: Ժիշտ այսպիսի դինամիկ բնույթի, նաև ոճական տարբերություններ ունենք ասուլիթի առաջին հատվածում.

They head upon thee is like Carmel... (ԱԹ)
Your head crowns you like Carmel... (ՎԹ)
Your head crowns you like Mount Carmel... (ՆՄԹ)
You carry your head like Carmel... (ՆԱԱ)
Your head is held high like Mount Carmel... (ԲԱԱ)

Դինամիզմը սովորաբար պատկերավորության, պատկերի կենսունակության շափանիչներից է: ՍԹ-ի մեջ ունենք բոլորովին ուրիշ որակ, որտեղ դինամիզմը թաքնված է ներքին, առաջին հայացքից ոչ ակնհայտ աղերսային կապերի, դրանց հաճախականության մեջ: Որքան խիտ են իմաստային այս կամուրջները, այնքան ներուճակ ձևով «շարժում» է պարունակում ասուլիթը: Բառիմաստային կողմի վերլուծությունն, անշուշտ, հարստացնում է բովանդակային պլանը՝ աղերսների և բազմաձայնության հնարամոլությունները բառային մակարդակից տեղափոխելով գաղափարների մակարդակ: Կարմեղոսին՝ նմանեցվող գլուխը մատնանշում է մտքի զորեղության,

7 Կարմեղոսը Բագավորության արևմտյան ծովերին անտառածածկ դագաթով լին է, որ հայտնի է իր գեղեցկությամբ:

իսկ ծիրանիի նմանվող մազերը՝ արքայական լայնությունների գաղափարը: Բունաստեղծական ուժով, հնչմամբ ամբողջացած ազնիվ վեհության այս պատկերը բաժան-բաժան է լինում մյուս տարբերակներում՝ մանրանալով ու վերածվելով ընդամենը գունեղ համեմատությունների:

Հնչման մի ներքին տրամաբանություն և երաժշտականություն կա ԱԹ-ի ասույթի թե՛ հնչյունական կազմում, թե՛ հնչերանգային կառուցվածքում, մասնավորապես՝ երկար ձայնավորների, երկբարբառների, կիսաձայնների, ձայնորդների, հազազի ներդաշնակության առկայությամբ պայմանավորված: Տրամաբանական-իմաստային-բանաստեղծական ծանրությունը կրող բառերն առանձնացվում են դարձերկերով, որոնք իրենց հերթին պայմանավորված են պայթականներով: *like Carmel, like purple: խոսքի այսպիսի մեղեդային ու բարեհունչ հագեցվածությունը շունի հետագա տարբերակներին և ոչ մեկը (բացառելով, իհարկե, ՎԹ-ն, որը հարազատ է մնացել ԱԹ-ին):*

Թարգմանական մեկնաբանությունների հետաքրքիր հնարավորություններ է տալիս հետևյալ պատկերավոր համեմատությունը.

... for why should I be as one that turneth aside
by the flocks of thy companions (ԱԹ) 1:7)⁸.

ԱԹ-ի օրինակում իսկ արդեն ծանոթագրություն կա, որ ասույթի ընդգծված մասը եբրայերենից կարելի է թարգմանել *„as one that is veiled“*: Առկա հետագա փոփոխությունների հնարավորությունները պայմանավորված են թարգմանության կրկու տարբերակներով՝ հիմնական՝ բուն տեքստի համեմատությունը և երկրորդային՝ տողատակի լրացուցիչ նշումը: Սա կարևոր է, որովհետև զործ ունենք ողջ պատկերի փոփոխության հետ, որն Աստվածաշնչի ավելի լայն համատեքստում իմաստային նոր երանգներ է սփռել: Հնարավոր մեկնաբանություններից միայն մեկի ընտրությունը ռահմանափակումներ է բերում: Այսպես. Աստվածաշնչի ՆՄԹ-ի մեջ նույն ասույթում գերադասությունը տրվում է ԱԹ-ի ծանոթագրական հղմանը համապատասխանող իմաստային ամբողջությանը. առաջին պլան է մզվում *veiled տարբերակը*. Why should I be like a veiled woman beside the flocks of your friends? (ՆՄԹ): ՆՄԹ-ի տեքստով պայմանավորված՝ սա տրամաբանորեն հանդեպում է լայն համատեքստում ստեղծվող աղերսին՝ Քրիստոսին՝ «թեթևաբարո կին»։ Այս աղերսը նշվում է նաև ՆՄԹ-ի տեսական հետազոտության մեջ: Vail (քող) կրում էին կանայք՝ որպես արդ ու դարդի մաս, հարսնացուները կամ թեթևաբարո կանայք՝ քողարկելու համար իրենց նվաստ էությունը: Այս դեպքում ՆՄԹ-ն շեշտը դնում է վերջին իմաստի վրա, վկայակոչելով ծն. ԼԲ, 14, 15 (Հուդան Թամնայի ճանապարհին Ծնայի մուտքի մոտ նստած տեսնում է հրեա քողով ծածկած Թամարին և կարծում, թե անառակ կին է): Այս դեպքում երկուսում էլ (ԱԹ, ՆՄԹ) ունենք *vail (veil)*: Եվ հետաքրքիր է, որ թե՛ ԱԹ-ն և թե՛ ՆՄԹ-ն հետևողական են և պատկերավոր մտածողության մեջ՝ ամբողջական: Լիովին տրամաբանական է, որ ԱԹ-ն որպես հիմնական ձև նշում է *as one that turneth aside-ը*. Խուսափելով ուղղակիորեն առաջարկել *veiled woman*, կապակցությունը, քանի որ *vail* բառի իմաստային ընդգրկումը ԱԹ-ի մեջ շատ ծավալուն է: Համադրելիս տեսնում ենք, որ ԱԹ-ի *vail-ին* ՆՄԹ-ում համապատասխանում են *curtain (curtain of testimony), shawl, cloak, shroud* բառերը¹⁰. Իսկ մյուս կողմից՝ *vail-ը* ԱԹ-ում հան-

⁸ Ա 1:7 ...այսպես ինչպես համար թափառականի պես լինիմ քո ընկերների հօտերի մոտ:

⁹ S. Cruden's Complete Concordance to the Bible with notes and Biblical Proper Names Under One Alph. Arrangement, Cambridge, 1987.

¹⁰ Veil բառի ստուգաբանությունը ես բացահայտում է հետևյալ իմաստային երանգները. from L. „Velum“—„sail, curtain, covering“ (Dictionary of Word Origins, Joseph T. Shipley. The Philolog. Library, Maruzen Com.

դևս է գալիս veil of temple, veil of ignorance կապալցություններում: Այս դևալքում էրկու տարբերակներն էլ հետևողականորեն ստեղծում են իրենց ուրույն պատկերային համակարգը:

Հետքերով turn aside նույնքան բազմաձայն և փոխաբերական երանգներով հարստացած բառակապակցությունը և միաժամանակ հղում կատարելով vaile՝ բառին, ԱԹ-ն նախ և առաջ նպաստում է այս բառերի բազմաշերտ հնչմանը այն դեպքում, երբ ՆՄԹ-ի բառերն ավելի տարրորդված են ու միանիստ: ԱԹ-ի մեջ բառերն իրենց ընդգրկումով ավելի տարրորդական են, քանի որ ներառում են սկզբնական իմաստներն ու իմաստային երանգները, և աղբյուրներն այստեղ չեն կրում բացահայտ բնույթ: Մյուս կողմից turn aside-ը ԱԹ-ի լայն համատեքստում նոր արձագանքներ է գտնում, բացի բառի ֆիզիկական շարժել, թափառել իմաստից այն ավելիացնում է խոտորովել, շեղվել, ծովել փոխաբերական իմաստավորումը¹¹:

Բոլորովին նոր որակներ են ստեղծվում հետագա երկու տարբերակներում (բացի ՎԹ-ից): Ավանդական առավել թովանդակ ու ընդգրկուն, աղբյուրներով ու լայն համատեքստով հարստացած պատկերին ՆԱԱ-ում փոխարինում է, գուցե ինքնուրույնաբար ոչ պակաս փոխաբերական, սակայն ավելի մասնավոր, ժամանակակից ընթերցողին հարմարեցված, բանաստեղծականությունից զրկված պատկերը¹². ... that I may not be left picking lice as I sit among your companions' herds (ՆԱԱ)... why should I need to look for you among the flocks of the other shepherds? (ԲԱԱ): ԲԱԱ-ի other shepherd-ը իմաստային-ոճական բոլորովին այլ բովանդակություն ունի և չի կարող companion-ին փոխարինել ո՛չ իմաստի լիարժեքությամբ, ո՛չ էլ նշույթավորվածության տեսանկյունից:¹³

Նեղանում, մասնավորվում է նաև ՆԱԱ-ի օրինակը, որտեղ, ի դեպ, կորուսում է նաև համեմատությունը, herd-ն էլ flock-ին համազոր բառ չէ: Flock-ն ամենաքիչը երկնիստ բառ է. բովանդակում է թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ ուղորտներին վերաբերող իմաստներ. «ինչպես հայերենի «հոտ» կամ, ասենք, լատիներենի նույն արմատի երկու ելքերը՝ pascre, past—pastoral մի կողմում, և pastor՝ մյուս:

Ուղիղ ճանապարհից շխտորովելու, շմոռորվելու, նվիրումի ու հավատարմության շատ ավելի խոր ու ընդգրկուն գաղափարն արտահայտման լահա այսպիսի դրսևորումներ է գտել, ընդհուպ մինչև that I may not be left picking lice հասարակաբանական կապակցությունը¹⁴: Հնդհանուր տպավորությունն այն է, որ «երգի» աշխարհիկ արժեքավորումը հաստատելու համար այս թարգմանությունները որպես միտում պատկերներին կենցաղային բնույթ են տալիս:

Կարելի է նշել նաև ասույթի ձևակառուցվածքային որոշ առանձնահատկություններ: ԱԹ-ի ճարտասանական հարցադրում պարունակող նախադասության փոխարեն ՆԱԱ-ն բերում է համեմատությունը կորցրած ժխտող բնույթի ասույթ: ԲԱԱ-ի ասույթը ևս համեմատությունը սպառել է և համատեքստից դուրս պատկերավոր-փոխաբերական չէ:

Բովանդակության և ռիթմիկ-հնչյունական-հնչերանգային արտահայտության ներդաշնակություն է նկատվում նաև ԱԹ-ի համապատասխան տողում պայմանավորված դադարներով, որոշակի իմաստակիր բառերի շեշտ-

¹¹ Տե՛ս Deut. 5:32 Ps. 40:4 :

¹² Թարգմանիչները ավելի հակված են ստեղծել ժամանակակից նոր դարձվածքներ, քան վերարտադրել ավանդական «աստվածաշնչային» անգլիկները:

¹³ Companions-ը ստուգաբանվում է որպես իրար հետ հաց կարող ընկերներ՝ լատ. com (միասին)—panis (հաց), տե՛ս Dictionary of Word Origins:

¹⁴ «Pick»—choose, select; «Louse»—a contemptible person, infml (Տե՛ս Longman New Universal Dictionary, 1989):

մամբ, ձայնորդների, կիսաձայնների, հատկապես երկբարբառների և շունչ-
ներմուծող շփականների գերիշխող կաղմով: Ինչպես և նախորդ դեպքում,
շեշտված բառերը, բացի դադարներով առանձնացվելուց, պարունակում են:
պայթականներ՝ turnets, locks, companions, որոնք ավելի են թանձ-
րացնում պատկերը: Մյուս թարգմանություններում վերը նշված որակը չկա՝
թե՛ հնչերանգը, թե՛ հնչյունական կազմը, թե՛ ութմը անկանոն են, չհամա-
կարգված:

Պատկերավորման հնարավորությունների ուրույն դրսևորումներ ունենք-
հետևյալ համեմատությունների մեջ.

His head is as the most fine gold, his locks are bushy (or
curled), and black as a raven (ԱԹ 5: 11)¹⁵.

«Գանգուր մազերի» պատկերը հինգ թարգմանություններում տարբե-
արտահայտություններ է գտնում. bushy և like palm-fronds մի կողմում և
wavy՝ մյուս: Արդեն իսկ ԱԹ-ում bushy-ն տողատակում բացատրություն
ունի, curled, որը վԹ-ում դառնում է wavy: Ի դեպ, նույն bushy բառը
ԱԹ-ի ողջ համատեքստում հանդիպում է մեկ անգամ միայն, այստեղ՝ «Երգ
Երզնայի»: Պատկերավորման ներքին տրամաբանության միայն հեռավոր
մերձակցություն կա ԱԹ-ի «locks are bushy» և ՆԱԱ-ի «locks are like palm-
fronds» ասույթների միջև. վերջին դեպքում, իհարկե, նոր համեմատություն
է ստեղծվել. սա հատկանիշի արձանագրում չէ պարզապես: Նույն ՆԱԱ-ն
յուրահատուկ մեկնություն է տալիս նաև ԱԹ-ի «His head is as the most
fine gold» պատկերին. «His face is bronzed and smooth»: Ինչու bronzed
և բոլորովին անսպասելի՝ smooth: Պատկերավոր և բանաստեղծական head as
the most fine gold համեմատության ուղղը գրավում է այդքան մասնավոր-
աբանաբանական, փոխաբերական իմաստն ու համեմատությունը կորցրած
նախադասությունը: Փորձ է արվել կոնկրետացնել պատկերը, որը իմաստա-
լիկ կառույցներ է բերել. չէ՞ որ head-ը միայն face չէ, bronzed և smooth
բառերն էլ as the most fine gold իմաստային ծավալը լիարժեք չեն ար-
տահայտում: Ազնիվ ոսկու հետ համեմատությունը հոգևոր բարձր արժեքա-
վորում է նշանակում բովանդակային պլանում և ոչ պարզապես ֆիզիկական
վայելչության նկարագրություն. «ագուզի նման սև» գանգուր մազերի պատ-
կերը շարունակում և ամբողջացնում է կենսականության, երիտասարդ, զո-
րեղ մաքի և հոգու հավերժության գաղափարը: Հետաքրքրական է, որ բա-
ցառությունը ՆԱԱ-ի, որտեղ այս պատկերն ընկել է, black as a raven հա-
մեմատությունը բոլոր թարգմանություններում անփոփոխ է մնում:

Հնչման առանձնահատկություններն ԱԹ-ի այս ասույթում նույնպես
օրինաչափ են: Ինչպես և նախորդ դեպքերում, այստեղ ևս գլխավոր իմաս-
տակիր բառերն առանձնացնող դադարներին նախորդում են վերընթաց հըն-
չերանգը, որոշակի դանդաղեցումը՝ սրանով հանդիսավորություն հաղորդե-
լով խոսքին: Հնչյունական կազմի վերլուծությունը գլխավոր իմաստակիր
բառերում վեր է հանում նաև բաղաձայնայնության և առձայնայնության դրսևորում-
ներ:

Առանձին դեպքերում թարգմանությունից թարգմանություն պահպան-
վում է պատկերի ամբողջականությունը, ներառյալ նաև ոճականուցված-
քային և հնչերանգային առանձնահատկությունները, երբ փաստորեն գործ
ունենք «հոմանիշ-պատկերների» հետ:

Այսպիսի առանձնահատուկ որակ է ներկայացնում «Երգի» բանաստեղ-
ծական-կոմպոզիցիոն կառուցվածքի իմաստով կուլմինացիա հանդիսացող
հատվածը.

¹⁵ Ե 11 նորա գլուխը ոսկի է մաքուր, նորա գեները ծածանվում են, սև են ագուզի-
պէս:

Set me as a seal upon thine heart, as a seal upon thine arm: for love is strong as death; jealousy is cruel as the grave; the coals therefore are coals of fire, which hath a most vehement flame (ԱԹ 8:6).

Set me as a seal upon your heart; as a seal upon your arm; for love is strong as death, jealousy is cruel as the grave. Its flashes are flashes of fire, a most vehement flame (ՎԹ). Place me like a seal over your heart, like a seal on your arm; for love is strong as death, its Jealousy unyielding as the grave. It burns like blazing fire, like a mighty flame (ՆՄԹ)¹⁰.

Մահվան պես զորավոր սիրո զովերդում է այս տողը, որի տարբեր թարգմանությունները «հոմանիշ» ունենում են բաբախում. հոմանիշ են գլխավոր իմաստակիր բառերը (cruel - unyielding; coals of fire - flashes of fire - blazing fire; vehement-mighty), ամբողջ ասույթի ընդհանուր իմաստները, որ հանգեցնում է բառերի համազոր շեշտման, համանման ունենալի, հեշերանգի. ներքին ունենալ ասույթը մեծ զաղարկերով բաժանում է հատվածների, որոնց ընդհանուր իմաստները յուրօրինակ «հոմանշային կուտակում»¹¹ են. Set me as a seal upon thine heart & as a seal upon thine arm կամ love is strong as death & jealousy is cruel as the grave: Բացի համեմատությունների ամբողջական իմաստների հոմանշային արժեքից, ԱԹ-ի լայն համատեքստում հոմանշային արժեք են ձեռք բերում նաև համեմատությունների իմաստակիր բառերը. death, grave կամ թե strong, cruel (Isa. 38:18, Job. 13:14, Isa. 13:9 & այլն), Հատվածի ներդրումակ ունենալը, որ պայմանավորված է նրա ներքին կառուցվածքով & իմաստի արամաբանությամբ, պահպանվում է տարբեր թարգմանություններում՝ ի վերջո՝ հանգեցնելով համազոր բանաստեղծական պատկերների. Գլխավոր իմաստային-հեշերանգային ծանրությունը կրող բառերի զուգադրումը ևս բերում է այս մտքին. Set (ԱԹ) & place (ՆՄԹ) բառերը հոմանիշներ են ընդհանրապես & այս համատեքստում մասնավորապես, շնայած set բառն ինքնին, ինչպես & ԱԹ-ի լայն համատեքստում առավել ընդգրկուն է (ԱԹ-ի set-ին ՆՄԹ-ի տարբեր հատվածներում փոխարինում են put, place, draw, take, bring, lead բառերը); ԱԹ-ի cruel (և տողատակում hard) բառերի ընդհանուր հասկացական բովանդակությունը ՆՄԹ-ի մեջ աբստրակցավորված է unyielding միավորով. Այստեղ էլ ԱԹ-ի cruel բառի ընդգրկած հասկացական ծավալն ավելի մեծ է, քան այն hard նշումը, անշուշտ, նեղացնում & մասնավորեցնում է այն. hard բառի առաջին բառարանային իմաստն է՝ „not easily penetrated or yielding to pressure“¹². Հետևաբար՝ unyielding & cruel միավորների հոմանշային հարաբերությունը ի հայտ է գալիս hard բառի օգնությամբ. Ինչ վերաբերում է ՆՄԹ-ի blazing fire կապակցությանը, որ զուգահեռ է ԱԹ-ի coals of fire & ՎԹ-ի flashes of fire կապակցություններին, ապա այն գործածվելով ՆՄԹ-ի լայն համատեքստում coals & fire բառերի հարևանությամբ, վերջիններիս իմաստներով հարստացած՝ հիշողության մեջ կարող է զուգորդվել այդ փոքր համա-

¹⁰ Ը : 6 Ինչ կերպի պէս դիր սրտիդ վերայ, կերպի պէս՝ քո բազուկի վերայ. որովհետեւ մահուան պէս զորաւոր է սէրը. դժոխքի պէս ամուր է նախանձը. նորա կայծերը բոցավառ կրակի կայծերի պէս են:

¹¹ Այս մասին տե՛ս А. Н. Морозова. Равнозначность слов как текстологическая проблема (автореф. канд. дис. филол. наук, М., 1981).

¹² Տե՛ս Longman New Universal Dictionary.

աւքստերի հետ: ԱԹ-ի և ՎԹ-ի vehement flame կուպակցութեան մեջ առաջին բաղադրիչը ներմուծում է բառարանային «ուժգին, զորեղ, չափազանց հզոր» իմաստները¹⁹: Անգրադառ արվ ՆՄԹ-ի «like a mighty flame» համեմատութեանը և հինվելով նույն տարբերակի հետազոտական մասում տրված համապատասխան բացատրութեան վրա (like a mighty flame=like the very flame of the Lord), կարելի է հզորակացնել, որ պատկերն այստեղ լուրջ լինակ «բաղմաձայնութիւն» է ձեռք բերում mighty բառի հարուստ ասոցիատիվ պլանի շնորհիվ: Բառարանային «powerful, accomplished or characterized by might, great»²⁰ հիմնական իմաստներն ամբողջացած են Աստվածաշնչի ողջ համատեքստում նոր որայ ստացած, Տիրոջ անվանն ու դործե-ին առնչվող բովանդակութեամբ. «the great God mighty and a vesome, mighty power, strong and mighty, mighty voice, mighty acts» և այլն:

Ներքին տրամաբանութեան մերձութիւնը այս երեք թարգմանութիւններում հանգեցրել է նաև հնչերանգային զուգաձևերի առկայութեանը: «Ծրգն» ընդհանրապես և հատկապես այս վերջին գլուխը ամբողջովին հյուսված են բանաստեղծականութեամբ: 8:6 հատվածը հաջորդ (8:7) տողի հետ կազմում է մի կուրիինացիոն ամբողջութիւն, որն էլ, անկասկած, ունի իր հնչերանգային յուրահատուկ արտահայտութիւնը: Համեմատաբար շեղոք տեմբրով, հանդարտ տեմպով սկսվող խոսքի (8:1) բանաստեղծական հոսքը բերում է մի առանձնահատուկ լարվածք, հանդիսավոր տեմբր: Բնորոշ են համալսի ութմը, հարվածների հաճախականութիւնը և շեշտերի ուժգնութիւնը: Այս տողում կանոնավոր ութմը պայմանավորող գործոններից մեկը չափածո խոսքին բնորոշ բառային-շարահյուսական հարակրկնութիւնն է (անաֆոր)՝ (օրինակ. «as a seal upon thine heart; as a seal upon thine arm» ԱԹ-ի կամ «love is strong as death; jealousy unyielding as the grave» ՆՄԹ-ի միջ): Հատվածը դիտակցվում է Իբրե 9 (10)-վանկանի տողերից բաղկացած, արական հանգով կերտված չափածո խոսք:

Կուրիինացիային հաջորդում է անկումը, հնչման ինտենսիվութեան մարումը՝ նույնքան աստիճանական, որքան և աճի ժամանակ: Սա արժեքավորվում է նաև նրանով, որ բանաստեղծական խոսքի այսպիսի ներքին զարգացումը բնորոշ է նշված երեք տարբերակներին: Հիշատակութեան արժանի է նաև այն, որ հնչերանգի առումով «հոմանշային միտումը» նկատելի է ոչ միայն առանձին հատվածներում, այլև առավել լայն համատեքստում (մասնավորապես գլ. 8):

Այսպիսի դեպքերը մասնակի դրսևորումներ են և շեն տարածվում թարգմանական բոլոր տարբերակների վրա: Իսկ իբրև ընդհանուր օրինաչափութիւն կարելի է նկատել, որ պատկերային համակարգի գեղարվեստական արժանիքների (մասնավորապես պատկերավոր համեմատութիւնների) տեսանկյունից նշված թարգմանական տարբերակների մեջ առավել բարձր արժեք ունի ԱԹ-ն: Հավանաբար, պատահական չէ նաև, որ Աստվածաշնչի անգլերեն տարբերակների որոշ համեմատաբաններ այն ընդունել են իբրև «բնագրային իրավունք ունեցող» թարգմանութիւն, դրական անգերազանցելի կոթող, որն իր արժանի տեղն ունի անգլիական գրական ժառանգութեան և ընդհանրապես մշակութային մտածողութեան մեջ²¹: ԱԹ-ի պատկերներն առավել ընդգրկուն են՝ աղերսներով ու բառերի բազմաձայնութեամբ հարստացած:

19 Տե՛ս նույն տեղում:

20 Տե՛ս նույն տեղում:

21 Նուրիսկ թեթևակի ծանոթութիւնը անգլիական գեղարվեստական գրականութեան տարբեր նմուշներին կարող է բացահայտել Աստվածաշնչի հենց այս՝ ԱԹ-ին ուղղված բազմաթիվ հղումները:

Անկերն. համեմատաբար նոր տարբերակների դիմացիկ պատկերները զննում են իրենց զուգահեռությամբ: Կարող է պարագրաֆալ թվալ, բայց բխական ժամանակների մտածողության կոնկրետությամբ տեսողական պատկերները բովանդակային ավելի մեծ հորոշումն և բարձր արժեք ունեն ԱԹ-ում և օգտակար են ինքնօրինակ մեղեդայնությամբ, որովհետև այստեղ ժամանակա-կից դիմացիկ փոխաբերությամբ կերտված ու ավելի կոնկրետացված նոր թարգմանությունների հեղ բառիմաստային առանձին ճանաչման առկա են ոչ բացահայտ տեսքով: Թիրևս սրանով է բացատրվում «Երգի» պատկերային համակարգի կենսունակությունը. ողջ կոնկրետությամբ հանդերձ շարժման պոետիկան խորքում է:

Ամփոփելով, կարելի է ասել, որ կոնկրետ հատվածի տարբերակների զուգորդումն օգնում է առավել ամբողջացնելու պատկերացումը «Երգի» համակարգի մասին, ճշգրտելու ընկալման սահմանները: Անկախ նրանից, թի ինչպիսի փոխաբերական թե ոչ փոխաբերական, բանաստեղծական կամ ոչ բանաստեղծական մեկնաբանություն ունի այս կամ այն հատվածը, այն սկսում է իմաստավորվել «Երգի» լայն համատեքստում:

Հարկ է նշել, որ հսկադրությունը՝ որպես վերլուծության մեթոդ, կարող է տալ առավել հուսալի արդյունքներ, եթե այն շահմանափակվի մեկ լեզվի շրջանակներում: Զուգահեռելով միևնույն հատվածի տարբեր լեզուներով կատարված թարգմանական տարբերակները և վերջիններիս ամբողջությունը դիտարկելով որպես բանասիրական լայն համատեքստ դրանցից յուրաքանչյուրի համար, կարելի է հասնել հատվածի բովանդակային նորանոր նրբ-րանգների բացահայտման, որն էլ կնպաստի նրա համակողմանի և լիակատար բմբռնմանը:

РОЛЬ СОПОСТАВЛЕНИЯ В ЛИНГВОПОЭТИЧЕСКОМ АНАЛИЗЕ (на основе английских вариантов перевода Библии)

С. К. ГАСПАРЯН, Г. С. ГИРУНЯН

Резюме

Вопрос о восприятии произведения словесного искусства с точки зрения его эстетической ценности является одной из сложнейших проблем филологической науки. Подойти к решению этой проблемы можно с помощью лингвопоэтического анализа, направленного на выявление тех «особых» языковых средств, которые обеспечивают определенное воздействие на читателя.

В данном случае лингвопоэтический анализ образных сравнений в цикле «Песнь песней» осуществляется путем сопоставления пяти вариантов перевода, которые как бы служат широким филологическим контекстом, способствующим раскрытию богатства семантико-стилистических оттенков значения.